ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔԵՐ

DISCORSI INAUGURALI

210-2021

digitised by A.R.A.R.@

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Գերապայծառ Լեւոն Սրբազան
Մեծայարգ Պարոն նախարար
Սիրելի ներկաներ

Ինձ համար մեծ պատիւ է եւ հաճոյք յորելեանական այս հանդիսութեանը ներկայացնել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ փոխանցել Ձեզ Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը:

Մենք յաճախ ենք հպարտանում, որ մեր ժողովրդի կեանքում ունենք Վենետիկի Ս. Ղազարի նման մի վանք, Մխիթարեանների նման մի լուսաւոր եւ հաւատաւոր միաբանութիւն եւ «Բազմավէպ»ի նման 175ամեայ մի պարբերական:

Ս. Ղազարը շատերի համար մի փոքրիկ Հայաստան է Վենետիկեան ծովածոցում, հայագիտական մի անգերազանցելի կաճառ, մեր ժողովրդի լուսաւոր ջահ, յատկապէս անցնող դարերին, երբ դրա կարիքը չափազանց մեծ էր:

Ինձ համար Ս. Ղազարը աղօթքի վայր է, ուր ամէն օր իջնում է Աստուած եւ այդ վայրը դարձնում աղօթք:

Այսօր, երբ երբեմն փորձ է արւում մեր քրիստոնէական եւ ազգային անանցանելի արժէքներին տալ նոր մեկնաբանութիւն, չափանիշ ընդունելով արեւմտեան ո՛չ իրական, այլ կեղծ արժէքներ, Բազմավէպի պատգամը առաւել եւս անհրաժեշտ է դառնում:

Մաղթում եմ, որ թէ՛ Մխիթարեան միաբանութիւնը ի Վենետիկ, ի Վիեննա եւ ի Հայաստան, եւ թէ՛ Բազմավէպը առաւել եւս արդիւնաւորեն մեր ժողովրդի կեանքում իրենց մշտական եւ մնայուն ներկայութիւնը:

Աստուած թող բոլորիս հետ լինի:

ԵԶՆԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

digitised by A.R.A.R.@